

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմայն խմբագրատան մէջ:

(Պատրաստողացիք զիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мимакс“

ՄԵԼԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Դպրի կիրակի և տօն օրերէն)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր ընկերութեան ժողովը:—Ներքին տե-
սութիւն: Նախաձեռնող Մարտի 12-ին:
—Արտաքին տեսութիւն: Տառնել Սենտ-
գոթարդ սարի մէջ:—Մշակութիւն: Գեղար-
արարութիւններ:—Բանասիրական: Խնդիր:

ՆՈՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՒՂԸ

I

Կիրակի օր, մարտի 9-ին, կա-
յացաւ Երթուրուն թատրոնում
նոր հիմնված «Հայերէն գրքերի
հրատարակութեան թիֆլիսի ըն-
կերութեան» ընդհանուր ժողովի
նիստը:

Ներկայ էր մեր բազմաթիւ ամե-
նաբնորդաւ ինտելիգենցիան, իսկ
մեծամասնութիւնը բաղկացած էր
մեր առեւտրական դասից: Նախ
և առաջ պէտք է ասենք որ ընդ-
հանուր ժողովի նախագահի ընտ-
րութիւնը շատ անաշուղ էր: Նա-

խագահը միմայն կարգապահ է,
այլ նա մի և նոյն ժամանակ ընդ-
հանուր ժողովի առաջնորդ է, նը-
րան հոգի տուող է: Նախագահը
ոչ թէ միայն պէտք է կանոնա-
դրութեան յօդուածները ժողովին
կարգաւ և հարցեր առաջարկի ու
քուէարկութեան ձեւը որոշի, այլ
պէտք է բացատրի ընդհանուր ժո-
ղովին կանոնադրութեան ոգին,
պէտք է ուղղութիւն տայ վեճա-
բանութիւններին, պէտք է մա-
նաւանդ ժողովի այն մասին բա-
ցատրի նրա պարտաւորութիւննե-
րը և ընտրելի անձինքների նշա-
նակութիւնն ու պաշտօնը, որ
միայն համակրելով գործին և փող
տալով ներկայ է գտնվում ժողո-
վին, առանց ընկերութեան խոր
միտքը, նրա նպատակը, ընկերու-
թեան ընտրելի գործող անձինք-
ների իսկական կոչումը հասկա-
նալու...

Պ. Նահապետեանը գուցէ
լաւ մանկավարժ է, բայց այդ չէ
նշանակում թէ նա լաւ նախա-
գահ կարող է լինել:

Եւ ճշմարիտ, նա ապացուցեց
որ նախագահելը նրա գործը չէ:
Նա, նախ և առաջ թող տուեց
ժողովին շեղվել կանոնադրութե-
անից, թող տալով քուէարկել և
քուէարկվել այնպիսի անձինք-
ներին, որոնք զեռ ևս իսկական
անդամ չը գրվեցան, հաստատ չը
յայտնեցին իրանց ցանկութիւնը
անդամ գրվել և չը վճարեցին վեց
րուբլ անդամական վճարը:

Կանոնադրութեան 24-որդ յո-
դուածը ասում է. «Բոլոր վերո-
յիշեալ պաշտօնատար անձանց
ընտրութիւնը կատարվում է ըն-
կերութեան ընդհանուր ժողովում»
զաղտնի քուէարկութեամբ: Ընտր-
ված համարվում են այն անձինք,
որոնք կը ստանան ներկայ եղող

անդամների ձայների մեծամաս-
նութիւնը:

Ուրեմն ինքն իրան հարց է ա-
ռաջարկվում կարող է արդեօք
քուէարկել և իրան քուէարկել
տալ այն անձը, որ զեռ ևս ան-
դամ չէ, երբ ընտրութեան համար
հարկաւոր է ընկերութեան ան-
դամների ձայների մեծամասնու-
թիւնը: Պարզ է, որ չէ կա-
րող:

Յիշե՛ք այստեղ և 8-որդ յո-
դուածի ծանօթութիւնը, թէ
«Եւ իսկական անդամը, որ վեց
ամսվայ ընթացքում չէ վճարել
իր տարեկան վճարը, համարվում
է ընկերութեան անդամակցութե-
անից հրաժարված»:

Պարզ է, որ եթէ անդամը
կորցնում է իր իրաւունքը, երբ
անդամ լինելուց յետոյ էլ, վեց ա-
միս շարունակ փող չէ վճարել,
ուրեմն նոյնպէս ոչինչ ընտրու-

Ի Ե Ն Թ Ը

ԱՐԿԱՆԵՐ ՎԵՐՋԻՆ ԹՈՒՍ-ԹՈՒՐԻՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՐԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ժ.Բ.

Ջաւոյն ճանապարհ գնելուց յետոյ, Սառան
դեռ նոր գագաք քրդուհու հաղորդած տեղեկու-
թիւնների ամենաստատիկ զարհուրանքը: Ստեփա-
նիկը տակաւին նրա մօտ կանգնած էր, և ամե-
նակն չը գիտէր, թէ որպիսի վիճակ էր սպասում
իրան: Նա իր ձեռքը երկխայի նման դրեց Սա-
ռայի ուսին և հարցրեց.

—Ի՞նչու այդ քրդի աղջիկները այդպէս անխելք
են լինում:

—Նրանք անխելք չեն, զաւակս, պատասխա-
նեց Սառան ծնողական գիծով:—Միայն կրթվում
են ու մեծանում են այնպէս, ինչպէս սարերում
աճում են վայրենի անասունները:

—Ինչպէս իմ այծեամբ, աւելացրեց Ստեփանի-
կը:—Այդ քանի օր է ուռեցնում եմ, խմցնում
եմ, շատ անգամ գրկում եմ, համբուրում եմ, բայց
էլի չէ սիրում ինձ, երբ մօտ եմ գնում, փախ-
չում է ինձանից:

Այդ խօսքերը ասելու միջոցով Սառան մի հա-
յացք ձեց զարեւոյտ պատանու վրա և նրա
աչքերը լցվեցան արտասուքով: Մինչև այսօր նա
այնպէս քննական աչքով դեռ չէր նայել այդ նա-
չկի դէմքի վրա, այդ քրդու կազմուածքի վրա,
որ ներկայացնում էր մանկութեան բոլոր գեղեցի-
կութիւնները: Նա երեսը չուտ տուեց և սրբեց
արտասուքը, որ պատանին չը նկատէ:

Բայց պատանին դեռ հետաքրքրվում էր քրդի
աղջկանով:

—Նա բաղա՞ծ էր, Սառա, ասում էր, որ այ-
սօր ոչինչ չէ կերել. ես մի կտոր հաց տուեցի
մեղրի ու կարգի հետ, խնդրեցի, որ այստեղ
նստէ և ուտէ: Բայց նա վեր առեց հացը, տեսայ,
ճանապարհին ուտելով գնում էր, երկի, շտա-
պում էր, Սառա, այդպէս չէ:

—Շտապում էր, նա շատ հեռու պիտի գնայ:
—Մինչև արեւոյ:
—Մինչև կապուտ սարերը:
—Հիմա խօ կը միջնի. ինչպէս պիտի անցկենայ
այնքան լեռներ, այն էլ ոտով, մենակ, առանց
ընկերի...—Սառա, ինչպէս չէ վախենում նա:
—Չէ վախենում. նրանք այդպէս սովորել են.
զայլ ձեռք ինչ բանից պիտի վախենայ...
Այդ միջոցին կանչեցին Սառային և նրանց
խօսակցութիւնը ընդհատվեցաւ:

Ինչո՞ւ կինը ամբողջ օրը անցկացրեց զառն մը-
տատանջութիւնների մէջ: Նա արեւած կամ ուշ-
քուտիցը ցրված մարդու նման, չը գիտէր թէ
ինչ էր անում. իր ուշքը իրեղէնը վեր առնելու
տեղ մի ուրիշ բան էր վեր առնում, իր կամեցած
կողմը գնալու փոխարէն մի այլ տեղ էր գնում ան-
դադար սխալվում էր, անդադար հօգուտ էր հա-
նում նա: Ամբողջ օրը անցկացրեց տենդային ան-
հանգստութեան մէջ: Մօրից օրը մնալով Ստեփա-
նիկը, նրա սիրելին էր, նրա կուրծքի վրա և
նրա ձեռքի տակ էր մեծացել: Այժմ ըս-
պառնում էր նրան մի ցաւալի վիճակ: Ո՛ւրիշ ա-
սէր, ինչպէս յայտնէր այն բոլորը, ինչ որ լսեց
այսօր քրդի աղջկանից: Նա գիտէր և համոզված
էր, որ Ստեփանիկի ծերունի հայրը, լսելով բէկի
զիտաւորութիւնները, չը պիտի կարողանար դիմա-
նալ այդ ցաւին: Երբեմն առանց զբաւն ևս սըր-
տումը մի անբժշկելի վէրք ունէր... Միւս կողմից,
Սառան մտածում էր, որ թաղցնելը անհնարին և
մինչև անգամ վեճասկար և պէտք էր կանխապէս
հոգ տանել զայն անբախտութեան առաջը առ-
նելու համար: Բայց ուրիշ յայտնէր:

Այդ մտածութիւններով նա անցկացրեց ամբողջ
օրը և տակաւին մի վճռական եղբայրացութեան
չը հասաւ: Երբ գիշերը նա առանձնացաւ իր ա-
մուսնի: Հայրապետի հետ, վերջինը հարցրեց.

—Սառա, դու այսօր ինչ որ մի ուրիշ տեսակ
ես երևում ինձ. ինչ է պատահել, խօ հիւանդ
չես:

—Գլուխս մի քիչ ցաւում է. այդ ոչինչ. կանցնէ,
պատասխանեց կինը, չը կամենարով միանգամով
սարսափեցնել իր տղամարդին մի ծանր հարուա-
ծով:

—Մի քիչ քաջալի քսիր ճակատիդ:
—Ամեն բան փորձեցի...
Փոքր առ փոքր նախապատրաստելով իր ա-

մուսնին, Սառան մտածում էր հաղորդել նրան իր
այնօրվայ տեղեկութիւնները. բայց չը գիտէր, թէ
որպէս պէտք էր սկսել, մինչև ինքը Հայրապետը
առիթ տուեց, հարցնելով.

—Այսօր մի քրդի աղջիկ էր եկել մեր տունը,
ո՞վ էր նա:

—Ֆաթմահ-բէկի կնո՞ւ: Խորշիդի աղախինն
էր:

—Ամեն անգամ, երբ այդ անխելք կամ նրա
մարդիկը մեր տունն են գալիս, խօսեց Հայրա-
պետը դառն կերպով.—ես միշտ սպասում եմ մի
չոր բան: Ա՛խ, երբ կը լինի, որ այդ անախտան-
հերի ոտքը մեր շէմքից կը կտրվի...

—Բայց մինչև այսօր նրանցից կրած վնասները
պէտք է Աստուծոյ բարութիւնը համարել...
պատասխանեց կինը խորհրդաւոր ձայնով:

Հայրապետը գոռաթափվեցաւ: Սառան նկա-
տելով այդ, ասաց.

—Բոլոր անբախտութիւնները մարդու համար
են...ինչ ցաւ, որ Աստուած ուղարկում է, մենք
պէտք է տաննք համբերութիւնով...

Ինչո՞ւ մարդիկ, ամեն մի անբախտութեան մէջ
միմիտարութիւն են գտնում, Աստուծոյ և միայն
Աստուծոյ վերաբերելով այն բոլոր տառապանք-
ները, որ կրում են այս աշխարհում: Կարծես թէ
Աստուած անբախտութիւնների հեղինակ լինէր:

—Ի՞նչ կայ, հարցրեց Հայրապետը սարսափե-
լով.—ինչ է պատահել:

Սառան սկսեց պատմել ինչ որ լսել էր քրդի
աղախինից: Նրա պատմութեան ժամանակ ինչո՞ւ
Հայրապետի դէմքը ամեն տեսակ գոյներ և ա-
մեն տեսակ արտայայտութիւն ընդունեց: Նրա հո-
գեկան կրքերը փոփոխակի կերպով յայտնուե-
ցան մինչև միւսին, և երեսի վրա կարելի էր նըշ-
մարկ երբեմն տեսնել, երբեմն դառն առեւտ-
րութիւն, երբեմն կատաղի բարկութիւն և երբեմն
տխուր ափսոսանք...

—Ես այդ վաղուց սպասում էի... խօսեց նա
առժամանակեայ խռովութիւնից յետոյ:—Ինչո՞ւ
հայր, նա կը մեռնի, երբ կը լսէ այդ քրդը...

—Ես ամբողջ օրը դրա վրա էի մտածում, ա-
ռաց Սառան.—նա կը մեռնի, անպատճառ կը
մեռնի:

Երկու ամուսինների մէջ տիրեց լռութիւն. եր-
կուսն էլ այն խորհրդածութեան մէջ էին, թէ ինչ
պէտք էր անել:

—Հօրս յայտնել հարկաւոր չէ, ընդհատեց Հայ-
րապետը տիրող լռութիւնը:

—Բայց եղբայրներից չէ կարելի ծածուկ պա-
հել, ասաց նրան Սառան:

—Եղբայրներին ես կը յայտնեմ:

—Ուրեմն ժամանակ կորցնելու չէ, հէնց այս
գիշեր յայտնիր, շտապեցնում էր Սառան.—ամեն
մի րօպէ թանգ է մեզ համար, ինչ որ անելու էք,
շուտով արեցէք, ո՞վ գիտէ, էդուց ինչ կը պա-
տահի:

Հայրապետի եղբայրներից մի քանիսը տանն
էին, իսկ մի քանիսը դեռ չէին վերադարձել
դաշտից: Նա վերկացաւ, պատուիրեց իր կնոջը, որ
հարսներից ծածուկ պահէ իր տեղեկութիւնները,
մինչև եղբայրների հետ խորհուրդ կանեն: Նա ա-
ռեց իր հետ տանը գտնվածներին և միասին դուրս
գնացին: Ճանապարհին յայտնեց նրանց, թէ մի
առանձին խօսելիք ունի, միայն պէտք է բոլոր
եղբայրները մի տեղ հաւաքվեն: Նա ընտրեց
խորհրդի համար մի խոլ տեղ, իրանց ջրաղացի
փոքրիկ անտառում, որովհետեւ տանը կարող էին
խանգարել նրանց, և գուցէ հայրը պատահամբ
կը խառնվէր խօսակցութեան մէջ:

Երբ բոլորը հաւաքվեցան, Հայրապետը յայտնեց
նրանց ինչ որ լսել էր իր կնոջից: Ինքն ըստ ին-
քեան հասկանալի է այն դառն տպաւորութիւնը
որ գործեց եղբայրներին վրա հաղորդած լուրը:
Բոլորը քարացածի նման սառած մնացին իրանց
տեղում: Ոչ մէկը չը գտաւ մի բառ անգամ խօ-
սելու: Նրանց դրութիւնը նմանում էր այն տե-
սարանին, երբ ամառնային դով երկնոյեան պա-
հուն, ճնճողկների հաղորաւոր բաղմութիւնը,
կուշտ, ուրախ, օրական աշխատանքից յետոյ, հա-
ւաքված ծառերի ոտների վրա, ճըլճըլում են, չըկ-
շըկում են և ամբողջ անտառը լցնում են մի կեն-
դանի աղմուկով: Յանկարծ նրանց մօտից սլանում
է բաղէն և ամբողջ խորը միանգամից լռում է...

Այս տպաւորութիւնը գործեց վեց եղբայրների
վրա, երբ նրանք լսեցին Ֆաթմահ-բէկի անունը
և նրա չոր գիտաւորութիւնը:

—Ահա քրդի բարեկամութիւնը, խօսեց եղբայր-
ներից մէկը.—բէկը մեր երկխաների կնքադրոյն է,
նա էլ է մոռանում մեր տնում կերած աղ ու հացը:

—Ի՞նչ բարեկամութիւն կարող է լինել զայլի և
ոչխարի մէջ, աղուէսի և հաւի մէջ, խօսեց Հայ-
րապետը գայրացած ձայնով:—Բայց մենք ոչխարից

զական ձայն չը պէտք է ունենայ այն անձը, որ բոլորովին անգամ չէ: Իսկ մարտի 9-ի ժողովի մէջ ընտրուած էին և բուէարկուած էին այնպիսի անձինք, որոնք ընկերութեան անդամ չեն և գուցէ երբեք չեն էլ լինի:

Բերենք այստեղ և կանոնադրութեան 9-որդ յօդուածը: «Ընկերութեան ընդհանուր ժողովները մէջ ներկայ գտնվող ամեն կարգի երկուսեւ անդամները ընտրողական ձայն ունեն և ընտրելի են ընկերութեան ամեն պաշտօնների համար»:

Իսկ ովքեր են ընկերութեան անդամները. սրանք են՝ իսկական, մշտնջենաւոր, աշխատակից և պատուաւոր անդամները, բայց կանոնադրութեան ոչ մի յօդուածում ասված չէ, որ հիւրերն էլ, որոնք մինչև անգամ հրաւիրված են եղել, իրաւունք ունենային անգամ կոչվելու, ուրեմն ընտրելու և բուէարկվելու:

Աւրեմն պարզ է որ թէ ընդհանուր ժողովը և թէ նախագահը պարտազանց եղան կանոնադրութեան առջև և ընկերութեան գործին համակող հասարակութեան:

Էլ վատ ենք, հաւից էլ վատ ենք... ոչխարը գոնէ եղջիւրներն ունէ, երեմին նրանցով կովում է. հաւը սուր եղունգներն ունէ, երեմին նրանցով ծաւառում է... Իսկ մենք մեզ պաշտպանելու համար ոչինչ չունենք... Մենք մարդկութեան կեդրոն ենք, նրա կողմնակից ենք, որ պէտք մարդիկ, ոչնչացնել, որ մարդկութիւնը չապականվի...

Այդ խօսքերը այնպիսի մի մարդային դառնութեամբ արտասանեց նա, որ եղբայրները սարսափեցան:

—Ի՞նչ ենք մենք, չարունակեց նա առաջին եղբայրակով.— մեր և գործունեայ մշակներ... և դրանով պարծենում ենք... բայց չէր, ձին, եղբ, գոմէջը մտնանից աւելի ուժեղ են և մեզանից աւելի շատ են բանում... մենք բանուոր անասուններ ենք և աւել ոչինչ...: Քրդի նիդակը աւելի մեծ գործ է կատարում, քան թէ մեր աշխատասէր արօրը և գուլթանը...: Մենք վատաւում ենք, նրանք ուտում են... մենք գեղեցիկ աղջիկներ ենք հասցնում, նրանք են վայելում մեր աղջիկներին սէրը...: Ինչ որ գեղեցիկ է, ինչ որ լաւ է, մեզ համար չէ... մեզ համար են պահված բոլոր տգեղութիւնները, որովհետեւ մի լաւ բանի արժանաւորութիւն չունենք...:

—Գանի որ առաջ, չարունակեց նա,—մի այսպիսի խօսակցութիւն ունէի հօրս հետ. հայրս աշխատում էր ինձ համոզել, թէ մեր դրութիւնը այնքան անախտանքի չէ, որքան մենք կարծում ենք, և ցոյց էր տալիս մեր օդի մէջ կանգնած հարստութիւնը, որին բաւական են մի խումբ քրդեր, մի արչաւանք,—և անա բոլորը ոչնչացաւ: Հիմա եկ, գու. նրան ասան, թէ անիցդ քարշիւռ, տանելու են քո սիրելի զաւակը, և դու աչքերդ բաց-բաց պիտի նայես, և մի խօսք անգամ ասելու համարձակութիւն չը պիտի ունենաս...: Այդ էլ լաւ դրութիւն է: Այդպիսի դրութեան կարող է համբերել հայը միայն, անամօթ, անպատիւ հայը միայն...: Ե՛կ, դու գնա, վազրի որջից դուրս քարշիւր նրա ձագը, նա իսկոյն քեզ իր բոյնի առջև պատառ-պատառ կանէ:—Այսպէս է և քուօրդը: Բայց մենք ինչ ենք... մենք ոչինչ ենք...:

Հայրապետի խօսքերը այն աստիճան բարկութեամբ վառեցին իր եղբայրների մի քանիսի սրբութեան, որ նրանք միմեան վառեցին ընդդիմանալ, մեռնել և չը տալ Ստեփանիկին քրդի ձեռքը:

Թիւրք կատարեալ իրաւունք ունի, մեր կարծիքով, անվաւեր համարել մարտի 9-ի ընտրութիւնները և պահանջել որ կայանայ նոր ընդհանուր ժողով, որի մէջ մասնակցեն միմիայն ընկերութեան անդամները և ոչ թէ նրանք, որոնք կանոնադրութեան զօրութեամբ ոչ իսկական, ոչ մշտնջենաւոր (մշտական), ոչ աշխատակից, ոչ էլ պատուաւոր անդամ կարող են կոչվել, այլ միմիայն հիւրեր են:

Երկրորդ սխալ որ գործեց նախագահը, այն էր, որ նա չը մտածեց բացատրել ընդհանուր ժողովի մեծամասնութեանը, որ ի հարկէ կարօտ էր օրինաւոր բացատրութեան, թէ ինչ տեսակ անձինք պէտք է ընտրվեն վարչութեան և խմբագրական մասնագործի մէջ, ինչ է այդ պաշտօնական անձինքների կոչումը, պարապմունքը, պաշտօնը, ինչի մէջ պէտք է կայանայ նրանց գործունեութիւնը:

Նոր է պատճառը որ մարտի 9-ին ընտրվածներից մի քանիսները բոլորովին անյարմար են իրանց յանձն առած պաշտօնին:

Դորա մասին մենք կը խօսենք մեր վաղվայ համարում:

Գ. Ա.

—Այդ ոչինչ նպատակի չի հասցնի, պատասխանեց խոհմ և բազմաթիւ հայրապետը.—մենք կը մեռնենք, բայց Ստեփանիկին դարձեալ կը տանեն...

—Գոնէ մեռնելուց յետոյ մենք չենք տեսնի մեր քրոջ անպատուութիւնը և հանդիստ կը լինենք մեր գերեզմանում...մէջ մտաւ եղբայրներից մէկը, Ալօն: Բայց միւս կողմից յայտնվեցան հակառակորդներ:

—Մենք պիտի մեռնենք, այն էլ մի աղջկայ համար, ու մեր երեխաներին անտէր պիտի թողնենք, դա ինչ խելք է, խօսեց եղբայրներից մէկը, որին կոչում էին Օհան:—Ես իմ ձեռները լուսանում եմ այդ գործից, մէկ քոյր ունէինք, թող չը լինի, դա մեծ ցաւ չէ. ինչու. մենք մեր գլուխը պէտք է մահի տանք նրա համար:

Եղբայրներից մի ուրիշը, որին կոչում էին Գալօ աւելի շահաւոր և աւելի գործնական կէտից նայելով Ստեփանիկի վիճակի վրա, սկսեց պաշտպանել Օհանի կարծիքը, ասելով.

—Ես դրա մէջ ոչինչ անբարատութիւն չեմ տեսնում, մի կողմից շատ լաւ է, երբ մենք ճարթթահ բէկի նման փետայ կուռնեանք, այն ժամանակ բոլոր հայերը մեզանից կը վախենան:—Օրինակ ձեզ, աւելացրեց նա, մեր դրացի Մելօն, նա ինչ մարդ է, տանը ուտելու հաց չունի, բայց որովհետեւ նրա աղջիկը մի քրդի կին է, դրա համար մենք ամենքս Մելօնից վախենում ենք, հետը խօսել չենք կարողանում, հէնց որ մի բան ասենք, Մելօն կը սովորացնէ քուրդ փետային և քուրդը մի գիշեր կը գա մեզ մեր տան մէջ կը մորթէ: Լաւ չէ մի այդպիսի փետայ ունենալ:

Այդ խօսքերը գրգռեցին Ալօնի բարկութիւնը որ առաջարկում էր ընդդիմանալ, և մինչև անգամ մահ յանձն առնել, և պաշտպանել իրանց քրոջ պատիւը: Նա ասաց.

—Յիսուս Գրիստոս վկայ, դու խելքդ կորցրել ես, Գալօ, այդ ինչեր ես խօսում, գիտի էլ այդպէս չի խօսի: Մենք պէտք է մեր լոյս հաւատը կորցնենք, մեր քոյրը անօրէն և անհաւատ քրդի ձեռքը պէտք է տանք, նրա համար միայն, որ հայերը մեզանից կը վախենան և մեզ կը պատուեն...: Թող չը լինի այսպիսի պատիւը: Բայց գիտե՛ս, որ երեսից կարելի է պատուեն, բայց սըրտում ամեն մարդ կանխօք է մեզ: Ո՛վ է սիրում Մելօնի, որ աղջիկը քրդի տուաւ: Այդ ուրիշ բան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՆ

20 փետրվարի

Ահա ձեզ լաւ ապացոյց, թէ ինչ հասարակութեան մէջ որ կան բանիմաց և հասկացող մարդիկ և մի և նոյն ժամանակ—գործունեայ մարդիկ—այնտեղ կայ և կեանք. այնտեղ կայ հասարակական շահ, այնտեղ կայ համակրութիւն ազգային ամենայն բարձր ձգտումների, այնտեղ կայ արձագանք ամենայն մի ազգագրութեան ձեռնարկութեան, այնտեղ կայ ցաւակցութիւն թշուառ սովորածների...

Ամսիս 17-ին Մոսկվայի հայոց եկեղեցում մի քարոզ խօսվեցաւ: Կարճ—բայց աղբուր և զգալից էին արժանապ. հայր Ստեփանեան խօսքերը, որոնք կաթակի նման թափանցեցին իւրաքանչիւր հայ սիրտ, ուր դեռ սպառնալիք չէ կարեկցութեան և եղբայրսիրութեան զգացմունքը: Եւ կարելի էլ չէր երկար խօսել այն մորմորել տեսարանների մասին, որ մանրամասնօրէն հաղորդում են մեր լրագրիները սովորածների վրա:—Ապա զիմելով հայ հասարակութեանը—օգնութեան ձեռք մեկնել թշուառ վանեցի սովորածներին, մեռնաւորապէս այսպէս վերջացրեց իր խօսքը արժանապ. քարոզիչը: Պնդում եմ, աղաչում եմ ձեզ, ասաց նա, որ շուտով օգնութեան հասնիք այս ճգնաժամին, վտանգը մեծ է և աւելի մեծ, քան դուք գուցէ կարծում էք. վտանգի հետեանքը աւելի կորստաբեր կարող է լինել. անհրաժեշտ է օգնել և շտապելու է: Գուք այնտեղ է արդարացինք այն յոյսը և ակնկալութիւնները, որ դեռ են մեր թշուառ եղբայրները ձեզ վրա. դուք պարտական էք օգնել և իբրև սոսկ մարդ և իբրև հայրենակից. հնց, հնց են նրանք խնդում և դուք մի պատառ հաց տալով—և կեանք կը տաք ներսն, որոնք այսքան դար հայրենեաց աւերակների հակողներն են, մեր նախնեաց սուրբ նշխարների պահպանները, հաւատոյ կենդանի նահատակները, հայոց աշխարհի կետրոնը, մեր ապագայի յոյսը...:

Այնուհետև նա առաջարկեց հասարակութեանը

է, որ նրանից վախենում են. չից էլ, գալից էլ շատերը վախենում են...:

Եղբայրներից մէկը, որ բոլոր ժամանակը լուս էր, իր յատուկ կրօնական փիլիսոփայութեամբ, սկսեց հակառակել Ալօնին, առաջ բերելով այն փաստերը, թէ չէ կարելի փոխել Աստուծոյ կարգադրութիւնները, ինչպէս լինելու է, կը լինի.—թէ Աստուած քուրդին քուրդ է ստեղծել, հային՝ հայ, քուրդին դէպք է տուել, հային բաւ. թէ մէկը միւսի տեղը բռնել չէ կարող, թէ այդ բոլոր բաները Աստուծոյ ձեռքումն են և վերջացրեց իր խօսքերը հետեալ օրինակով.

—Ազգաւոր շատ կայ ցանկանար սիրամարդի փետայներ ունենալ, բայց ո՞վ կը տայ: Աստուած մէկին այսպէս է ստեղծել, միւսին այնպէս:

Ալօն պատասխանեց նրան.

—Գուր մտանում ես, եղբայր, որ ազգաւոր և սիրամարդը զանազան թաշուկներ են. բայց քուրդը և հայը երկուսն էլ մարդիկ են: Գուրդը մօրից զէնքով չէ ծնվում. նա ծնվում է նոյնպէս մերկ, նոյնպէս թոյլ, որպէս հայը: Ի՞նչու ես դու ամեն բան Աստուծոյ վրէժն դնում. միթէ Նա է քրդի ձեռքը դէպք տուել, որ գայ մեզ կոտորէ, որ գայ մեր աղջիկները մեր տնից քարչէ, ու տանէ. միթէ Նա է մեզ այսպէս խելք և վախկոտ չինել: Աստուած այդ բաների մէջ չէ խառնվում. Նա մեզ խելք է տուել, որ ընտրենք ինչ որ լաւ է, ինչ որ օգտաւետ է: Եթէ դու կը գնաս այս րոպէին քեզ այդ գետը կը դըրես, Աստուած երբեք քո ձեռքից չի բռնի, որ արգելէ, դու ինքը ես քեզ կորցնում...:

Հայրապետը, երէց եղբայրը, խորին լուռութեամբ լսում էր վիճաբանութիւնները: Նա պատրաստ էր վեր կենալ և Ալօնի ճակատը համբուրել, բայց չը կամեցաւ վերաւորել միւս եղբայրներին:

—Տեսնում էք, ասաց նա ծանր կերպով.—մենք վեց եղբայրներ ենք հաւաքված այստեղ, բայց միմեանց չենք հասկանում և միմեանց հետ չենք միաբանվում: Բայց որքան դժուար է միաբանել մի ժողովուրդ և մի ամբողջ ազգ...: Քանի որ մենք այսպէս կը լինենք, մեր վիճակը միշտ անբարատ կը մնայ...: Մեր գլխի վրա տան, մեր երեսին կը թքեն, մեր կինը, մեր աղջիկը, մեր ապրանքը, մեր հողը մեր ձեռքից կը խլեն... և մենք ստիպված կը լինենք հանդիսել ամեն տեսակ անպատուութիւնների, ամեն տեսակ չարչարանների, և մի ողորմելի դը-

երեք անձինք—մեծ. պ. պ. Յ. Անանեանցին, Զ. Լիանոզեանցին և եկեղեցու երեք փոխան—Մ. Փանեանցին—որ յանձնաժողով կազմին ժապաւնած մատնանով և նուէր ժողովին հասարակութեան մէջ յիշեալ սովորածների համար:

Միւս օրը մեծ. պ. Անանեանցը հրաւիրական նամակներ ուղարկեց Մոսկվայեան հայերին՝ շնորհ. բերել իր տուն—սովորած վանեցոց օգնելու համար խորհրդակցութիւն անելու: Ժողովեցան մօտ 25 անձինք: Արժանապ. Զ. Ստեփանեանցը այսօր էլ մի քանի խօսք ասաց այն սարսափելի սովորածներին, որ սպառնում է ընտրվել անել շատ հայ գիւղեր, յետոյ նա յիշեց այն ջերմ համակրութիւնը, որ Մոսկվայի հայ հասարակութիւնը միշտ ունեցել է ամենայն մի ազգաշահ ձեռնարկութեան: Նրա խօսքերից իմացվեցաւ, որ մօսկվայեան հայերը վերջին 3 տարում, բացի զանազան տուրքերից և օտարական քահանայ կամ աշխարհական շատ անձինք հայերից վերադարձնելուց (անշուտ հոգալով նրանց ճանապարհածախքը)—խօսող գրամական նպատակներ են հասցրել հետեալ ձեռնարկութեանց համար. հայ գաղթականներին (1877—78 թ.), մի տաճկաստանից Պոդոլ վարդապետին.—Մանիսայի Ս. Լուսաւորի եկեղեցու համար. Արքեպ. Խորէն-Երաբէ-յին—Պոլսի ազգային Մատենադարանի համար. հանգուցեալ գեներալ Լազարեանցին — Ալաշկերտի գաղթականների համար, «Արարատեան» ընկերութեան, Խորէն վարդապ. Ստեփանէին—Երմիաքի ձեռնարանի համար, Ռուբինեան վարդապետին—Կարինի երկրագործական ուսումնարանի համար:

Մի միջիմարական երեկոյթ է տեսնել այսպիսի մի շարք բարեգործութիւնների. և այստեղ—բացի զգալի օգնութիւնից, որ հասցրել է հասարակութիւնը կարօտեալներին, այստեղ—ասում եմ, երեւում է շարժում, կեանք, հասարակական և ազգային շահ... Ահա, ինչ է մեզ համար թանկ. Անանայի այն տխուր ժամանակները, երբ հայ հասարակութեանը կարծում էր, որ թէ մի րուբ տայ ուրիշին—աղքատին, քաղցածին—իր տունը կը քանդվի, այնքան ծանր էր թւում նրան այդ նուէրը: «Այսպիսիք ես նրան փող տամ, խում պարտք չիմ. խում ինձ պարտք չի տուել, որ իս փող տամ. թող գառի ու ուտի...»: Այժմ կոչում մարդը, հարուստ մարդը սովորեցաւ ձեռքը շուտ շուտ ջրը տանել փող հանելու, ողորմութիւն տանել:

Իստի նման պէտք է մեր թշնամու համար աշխատենք, որ նա գոն և բախտաւոր ապրի: Իսկ մենք պիտի փառք տանք Աստուծու, որ գոնէ խընայում են մեր կեանքին, գոնէ թոյլ են տալիս մի չնչին դեռնելի նման քար զալ երկրի վրա...:

Խորին խորութեամբ վերջացնելով իր խօսքերը, Հայրապետը առաջարկեց, որ Ստեփանիկին հեռացնեն իրանց տնից և առժամանակ պահեն ս. Գրիգորեան վանքում, մինչև հնար կը գտնեն այնտեղից տանել, ուստաց սահմանը անցկացնել, և այնտեղ ուստաց հողի վրա նա ազատված կը լինի:

Օհանը և Գալօն չը համաձայնեցան մինչև անգամ այդ առաջարկութեանը, ասելով, թէ դա կը լինէր մի ուրիշ տեսակ ընդդիմադրութիւն բէկի կաթիլին:—Թագցնելով մեր քրոջը, ասեցին նրանք, մենք պատճառ կը տանք բէկի բարկութեանը և հետեալպէս նրա վրէժնադրութեանը:

Նրանք առաջարկում էին թողնել Ստեփանիկին տանը, դարձեալ կրկնելով մի և նոյն խօսքերը, թէ Աստուած ինչ որ կամեցել է, այն կը լինի, թէ Աստուծոյ գրածը մարդ չէ կարող ջնջել և այլն...:

Մի քանիսը պահանջում էին յայտնել իրանց հօրը, և նա որպէս տան մեծը և ընտանիքի գլուխաւորը, որպէս կը կամենայ, թող այնպէս կարգադրէ: Այսպէս վիճաբանութիւնը երկարում էր և ոչ մի հետեանքի չէին հասնում:

Յանկարծ խորհրդի մէջ խառնվեցաւ բուն, բոթաբեր և զգուշ լուսն: Ծառերի միջից լսելի եղաւ նրա չարագուշակ ձայնը: Բոլորը սարսափեցան:

—Անցէ՛ք, մենք ուղիղ էինք ասում, ձայն տըւեցին Օհանը և Գալօն.—անա բուն ես հաստատում է մեր խօսքը, վերջը վատ կը լինի, եթէ Ստեփանիկին հեռացնենք տնից:

Միայն Հայրապետը և Ալօն մնացին հաստատ իրանց համոզմունքի վրա: Խորհուրդը վերջացաւ անօրոյ կերպով, առանց մի վճռական երարակցութեան հասնելու:

(Կը չարունակվի)

լու, օգնութեան համար, ածման սկսում է հաս-
կանալ, որ բացի իրանից և իր փոքրիկ—կան աշ-
խարհում և այլ մարդիկ, որոնք կարծաւ են, որոնք
քաղցած են, որոնք օգնութիւն են խնդրում, ո-
րոնք՝ վերջապէս նոյնպէս իրաւունք ունեն ապրե-
լու... Այս մեծ քաղաքին է ժողովրդի ինքնա-
ճանաչութեան մէջ դէպի առաջ. այստեղից ար-
դէն դժուար չէ դէպի աւելի բարձր և ազնիւ ձեռ-
նարկներ...
Երկու ժամկէտ մէջ հաւաքվեցաւ 3550 բուքի
քան և հինգ մարդոց մէջ:
Իրաւի, հրաւիրածներ թիւը 25 մարդոց աւե-
լի էր, բայց շատերի բացակայութիւնը ամենին
նշան չէ, թէ նորա հրաժարում են հանգանա-
կութիւնից—փող տալուց: Հանգանակութեան
մատանով պէտք է չըջնն ժողովրդի մէջ: Բացի
դրանից մի պարոն (Գ. Սուլթան-Շահ) մինչև ան-
գամ դիմել է հայր Սուրէնեանցին, խնդրելով մի
ժապաւնիւմ մատանի իր օտարազգի բարեկամնե-
րի մէջ նուէրներ ժողովելու համար. մի երկու
հոգի (պ. պ. Ժամհարեանց և Հէջուբեանց) արդէն
1000 բուքիւ չափ ժողովել են իրանց ծանօթնե-
րից և խոստանում են մօտ օրերս մի նշանաւոր
գումար կազմել այդ նուէրներից: Հայ ուսանողները
ևս իրանց լուսնայն շտապում են դնել աղքատին սե-
ղանի վրա. նոյնպէս և երաժշտական—գրա-
կանական երեկոն, որոյ մասին եւ արդէն ձեռ-
գրել եմ, խոստանում է մի բաւականաչափ գու-
մար կրկին սովորանքների համար:

Հիմա խնդրել արեւ. Բնէ կերպով է հասցնե-
լու օգնութիւն սովորանքներին: Այստեղ կարծիք-
ները տարբեր են, ոմանք ասում են—ուղղակի
փող ուղարկել, ոմանք—հաց, վերջապէս հաւա-
նելի թուեցաւ ամենքին հեռագրով իմանալ սրա
մասին ռուսաց կոնսուլ պ. կամսարականի կար-
ծիքը և այնուհետեւ նորա համամատ տնօրինել այն-
պէս, ինչպէս որ աւելի յարմար կը լինի և՛ որ զըլ-
խաւորն է—աւելի օգտակար և փրկարար:
Այժմ մի երկու խօսք ՎՄԿԿ-ի մասին: Թող
ինչ կամեն ասեն. որքան կամեն—բողոք ձգեն,
անհրաժեշտ է միայն այս իրողութիւնը. մի լրագիր,
մի հասարակական օրգան, այն ժամանակ միայն
լիովին կատարած կը լինի իր պարտականութիւնը
և մեծ ծառայութիւն մատուցած հասարակութեա-
նը, երբ որ նա չուտով օգնութեան է հասնում
ժողովրդի առաւելանքներին և վտանգներին—այն
ճգնաժամին, երբ ինքն ժողովուրդը՝ տարաբաղ-
դութիւնից շուրաւ և վտանգից զարհուրած—չը
զիտէ ինչ մտածէ, ինչ սկսէ, ինչ գործէ, որին
զիմէ: Ահա այստեղ է պէտք հասարակական
թերթի օգնութիւնը, այստեղ հարկաւոր է նորա
ուղղութիւնը, նոյն խնդրի առաջնորդութիւնը,
որով պէտք է գործ տեսնէ նա՝ իրագործելի մի-
ջոցներ առաջարկելով, օգնութիւն խնդրելով, կա-
րեկցութիւն և եղբայրական ջերմ զգացմունք-
ներ քարոզելով, համակրութիւն ներշնչելով իր ըն-
թերցողներին մէջ և դուրս կանչելով նրանց մէջ
այն ազնիւ ձգտումները, որոնք պէտք է զրդեն
նոցա գործելու, օգնելու: Եւ այս պարտականու-
թիւնները—այս վսեմ ծառայութիւնը մեծ մասամբ
արդէն ցոյց տուել է և ցոյց է տալիս ՎՄԿԿ-ը: Ես
հաւատացած եմ, որ ներկայ եւանդուն շարժումը
սովորանքների համար—մեծ մասամբ կրկին ՎՄ
ԿԿ-ի աղիւստութեամբն է: Թող լաւ ուղարկու-
թիւն դարձնեն միւս լրագրերը վերաբերեալ իրո-
ղութեան վրա և այն ժամանակ գուցէ շատ մօտ
խնդիրներ պարզուին...
Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՂԱՄԱՐԻՑ մեզ գրում են հետեւեալ՝ «Տեղւոյս
հայ սիրողների խումբը, փետրվարի 15-ին երրորդ
անգամ ներկայացրեց յօգուտ աղքատների Պէ-
պօ կամեղիան: Ներկայացումը շատ աջող անցաւ:
Մեր շնորհակալութիւնը յայտնելով այդ խմբին,
յոյս ունենք, որ նա կը շարունակէ մի քանի
ներկայացումներ տալ յօգուտ Տաճկաստանի սո-
վեակներին»:

ՇԱՄԱՐԻՑ մեզ հաղորդում են, «Բերդամիր և
Ալվանդ գիւղերում յայտնված տարափոխիկ հի-
ւանդութիւնը սաստիկ կտորածներ է անում:
Հիւանդացածներից միայն 8% է ապրում: Գաւա-
ռագետի հետ յիշեալ գիւղերը գնացող բժիշկները,
թէ և հետազոտել են հիւանդութիւնը, բայց իրանց
կարծիքների մէջ տակաւին չեն համաձայնել:
Մէկը պնդում է, թէ ժանտախտի նշաններ է նը-

կատում հիւանդները մէջ, իսկ միւսը հերքում է
նրա կարծիքը: Որքան յայտնի է այս երկու բժիշ-
կները պիտի զան թիֆիւս իրանց հետազոտու-
թիւնների մասին զեկուցում տալու տեղային բը-
ժշկական խորհուրդին»:

Մեզ գրում են ՇԱՄԱՐԻՑ, որ փետրվարի
19-ին հանդիսւոր կերպով կատարվեցաւ Թաղա-
ւոր կայսրի 25-ամեայ զանակալութեան տօնախա-
նութիւնը: Այլ և հաղորդում են, որ այս քաղա-
քում սկսել են նուիրատուութիւններ հաւաքել յօ-
գուտ «Արարատեան» ընկերութեան և վանի սո-
վատանքներին: Նամակագիրը աւելացնում է, թէ ե-
րիտասարդները այս գործում բոլորովին անտա-
րբեր են մնում, աշխատում են միայն ծերունիները:
Դա բոլորովին պատիւ չէ բերում Շամախու երի-
տասարդութեանը:

Մեզ հաղորդում են Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ, որ «Մե-
ղու» մէջ հրատարակված այն լուրը, իբր թէ զըպ-
րոցների հին հողաբարձութիւնը չէ կամենում հա-
շիւ տալ նոր հողաբարձութեան,—բոլորովին սուտ
է և անհիմն: Որովհետեւ հին հողաբարձութիւնը
քանից անգամ կամեցել է հաշիւ ներկայացնել,
իսկ նորը զանցառութեան տալով, չէ կամեցել
ընդունել: Եւ եթէ կայ նոր հողաբարձութիւնը մէջ
մի խզմամանքով և իր պարտաւորութիւնը ճանա-
ճող անձն, դա դարձեալ հին հողաբարձու պ. Մ.
Արարատեանն է, որ թէ հին և թէ նոր հողա-
բարձութեան զանազան է: Նրա ճշմարտախ-
րութեան և եւանդոտ գործունէութեան մասին ոչ
մի աղուկեցի չէ կարող կասկածել, բացի վերոյի-
շեալ զըպարտիչ լրատուից:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ զանազան զանգատներ են զը-
րում պ. Գ. Տէր-Ա... մասին, որը աննե-
րելի միջոցներով վկայականներ ձեռք ձգե-
լով, նպատակ ունի ներկայացնել հոգեւոր իշխա-
նութեանը քանակաւ ձեռնարկելու համար: Նա-
մակագիրները խնդրում են բարձր հոգեւոր կառա-
վարութեանը ուղարկելու դարձեալ քանակաւ
ցուրտ արծառաւորութիւնների վրա:

Մեզ դարձեալ գրում են ԳԻՆԻՍԻՑ, որ զըպ-
րոցի հողաբարձուն հաշիւ չէ ներկայացնում հա-
սարակութեանը: Նոյն տեղից հաղորդում են, որ
պ. Բ. Արծրունին և զըպրոցի ուսուցիչը նուիրատ-
ւութիւններ են հաւաքում յօգուտ վանի սովա-
տանքների:

Մեզ հաղորդում են ՍՂՆԱԽԻՑ, որ փետրվա-
րի 19-ին մեծ հանդիսով կատարվեցաւ Թաղաւոր
կայսրի 25 ամեայ յօբելեանը: Նոյն տեղից հա-
ղորդում են, որ քաղաքի մէջ սկսվել է տարածվել
բողաղացաւ հիւանդութիւնը:

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են, որ այստեղ ստորա-
գրութիւն բացվեցաւ և նուէրներ են հաւաքվում
յօգուտ թիւրքաց Հայաստանի մեր սովատանջ եղ-
բայրների:

ՀԻՆ-ՆԱԽԻՑԻՍԻՑ մեզ հաղորդում են, որ
պ. նահանգապետի կարգադրութեամբ քաղաքի հայ
և թիւրք բնակիչներից հաւաքվեցաւ 10,000 բուք
և այդ գումարով մտադիր են ուրիշ տեղերից ա-
լիւր բերել տալ էփան գինով ծախելու համար:
Այժմ ալիւրը ծախվում է պուղը 3 ր. 20 Կօպէկ,
ցորենը 2 ր. 50 Կ., դարին 2 ր. 20 Կ., միսը՝ ոչ-
խաբին 12 Կ., իսկ տաւարինը 7—8 Կ., ձուի
հատը 4—5 Կօպէկ:

Մեզ հաղորդում են Հ. ՆԱԽԻՑԻՍԻՑ, որ
գնեւրաւ Գաւառի-խանը ընծայեց ժողովրդին 50
պուղ ցորեն: Բացի դրանից մի քանի պարոններ
փող են ժողովել, և յանձնել մի քանի հացթուխ-
ների, որ հաջը բազարում սովորականից էփան
գինով ծախեն:

Մեզ գրում են, որ ԱՍԱԼԻՔԱՒԱՔ գաւառի
Տատեշ գիւղի բնակիչ խնդ Լեւոնեանցը և
Աստատուրեանցը սկսեալ 1879 թականի ապրիլի
14-ից անյայտացած են. առաջինը 30 տարեկան
է, իսկ երկրորդը 35. Երկուսն էլ թուի դէմը ու-
նեն, Լուսմ ենք, որ նրանց անյայտացել են Չը-

ղըր սահմանի տաճիկները, ուր գնացել էին իրանց
բնակութեան համար յարմար տեղ գտնելու:

ԱՍԱԼԻՑԻՑ մեզ հաղորդում են, «Վեհա-
փաւ կաթողիկոսի հրամանին համեմատ, Թիֆլիսի
վիճակային կոնսիստօրիան հաղորդեց քաղաքին
հոգեւոր կառավարութեանը, որ «Նոր-Արշալոյս»
զըպրոցի համար հողաբարձական նոր ընտրութիւն
լինի, բոլորովին անկախ «Վերաբնութեան» և «Կա-
րապետեան» զըպրոցների հողաբարձութիւնների միու-
թիւնը ցանկանում էին օմանք զանազան չափեկան
նպատակներով»:

ՀԻՆ-ՆԱԽԻՑԻՍԻՑ մեզ հաղորդում են, որ
Մէջիդի մօտի կամուրջը, որ քաղաքի մէջ Նշա-
նաւոր կամուրջներից մէկն է, փուլ է եկել և ու-
շաղկունքի դարձնող չը կայ: Բացի դրանից փո-
տատան առջև հրապարակի վրա ձիւները հալվե-
լով, մեծ լճակ է կազմվել, որ անցնել անհա-
րին է:

Մեզ գրում են ՕԴԵՍՍԱՑԻՑ. «Այս քաղաքում
մօտ 200 տուն հայեր կան, որոնք արհեստով
գրեթէ բոլորն էլ սափրիչներ են և աղքատ: Քա-
ղաքի հարստութիւնը և վաճառականութիւնը զը-
տնում է յոյների և հրէաների ձեռքում: Որի
ընդհակառակը, հայերը շատ աղքատ են: Ունեն
մի եկեղեցի, երկու քահանայներ և մի ուսումնա-
րան, որ նոր է բացվել: Առհասարակ այս քաղա-
քի հայերը կորցրել են իրանց աղքատիւ առանձ-
նութիւնները և մինչև անգամ խօսում են յունաց
և հրէից լեզուով»:

ԲԱԳՈՒԻՑ մեզ հաղորդում են, որ փետրվարի
6-ին այնպիսի սաստիկ ցրտեր եղան, որ մի քանի
օր խանութները փակված մնացին, երեք ռուս-
ների դիակները սառած գտան, որոնք հարբած
մնացել էին դրուսի: Թանգութեան պատճառով
գողութիւններ և մարդասպանութիւններ խիստ
յաճախ են պատահում, այս օրերումս սպանեցին
երեք թուրքերի և մի ռուս կնոջ:

ՄՂԱԿԻՑ № 25-ի պ. Շամախեցու նամակի դէմ
մենք ստացանք շատ հերքումներ նոյն քաղաքի
հայաւետարանականներից, որոնց թողեցինք ան-
տիպ, միայն մէկը տպելով: Խորհուրդ կը տայինք
այդ պարոններին դադարեցնել այդ բանակութեւ,
դա աւելի երկպառակութիւնների առիթ կարող է
լինել, որ շատ ցանկալի չէ:

Մեզ գրում են ՇԱՄԱՐԻՑ, որ այստեղ ամեն
բան թանգացել է. ալիւրի պուղը արժէ 2 ր. 40
Կ., միսը, ոչխարինը՝ 15—20 Կ., տաւարինը
10—15 Կ., ածուխի մի բեւը 4—5 ր., ժողովրդի
ստորին դասակարգը անհրաժեշտ պիտոյնների
կողմից մեծ դժուարութիւնների մէջ է գտն-
վում:

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են, որ փետրվարի 28-ին
տեղային երկսեւ զըպրոցների ուսանողները, ու-
սուցիչների և հանդիսականների մեծ բազմութեան
հետ «Վարդ. ընկերութեան» դահլիճում փառաւոր
հանդիսով տօնեցին վարդանանց նահատակների
յիշատակը:

Մեզ մեղադրում են, որ «Մշակի» մէջ տպված
անունների և ազգանունների մէջ երբեմն սխալներ
ենք անում: Եթէ պ. պ. նամակագիրները ցան-
կանում են, որ տպագրական սխալները չը պա-
տահեն, թող սովորեն իրանք պարզ գրե-
լու:

Կերակի օր, մարտի 9-ին, ժամը 12-ին կայացաւ
Արծրունու թատրոնում «Հայերէն» գրքերի հրատա-
րակութեան Թիֆլիսի ընկերութեան ընդհանուր
ժողովի նիստը: Ժողովի նախագահ ընտրվեցաւ Ա.
Նահապետեան: Ձայների բազմութեամբ ընտրվեցան
ընկերութեան վարչութեան և խմբագրական մասնա-
ժողովի համար հետեւեալ պաշտօնական անձինք:
Վարչութեան ատենապետ՝ Արքայ Զօհրանիսեան,
փոխ-ատենապետ՝ Նիկողայոս Միրզոյեան, վար-
չութեան երկու անդամներ՝ Թիֆլիսի կատարին Ե-
ւանդուկեան և պ. Գաբրիէլ Միրզոյեան, ատենա-
դպիր՝ Ալեքսանդր Քիւմիւշեան, զանապա՝ Մոփ-
սէս Թաւադեան և զրապա՝ Բարսեղ Կանդուբա-
եան: Խմբագրական մասնաժողով. Ար-
շակ Նահապետեան, Սեդրակ Մանգիւնեան, Ստե-
փան Պալանտեան, օրիորդ Նատալիա Տէր-Մարկո-
սեան, Աւետիք Բաբայեան, Պողոս Ղամբարեան և
Զօհրանեան Չիլիանեան:

Ցայտի ձեռնածու պ. Կօզլովի որ արդէն մի
քանի գեղեցիկ ներկայացումներ է տուել Արծրու-

նու թատրոնում, առաջարկել է հետեւեալ կերակի
օր, մարտի 16-ին, տալ նոյն թատրոնում մի ներ-
կայացումն յօգուտ վանի սովատանքների: Նրա
առաջարկութիւնը ընդունվեցաւ և Արծրունու
թատրոնը այդ գիշերվայ համար արվում է նրան
անվարձ: Չէ կարելի շնորհակալութիւն չը յայտնել
պ. Կօզլովին և յոյս կայ որ Թիֆլիսի հայոց հա-
սարակութիւնը համակրելով բարի գործին, կը
շտապի ներկայ գտնվել թատրոնում:

Մարտի 9-ին, գիշերը, Թիֆլիսի երկու զանազան
կէտերի վրա հրդէ՛ յայտնվեցաւ՝ Երևանեան հրա-
պարակի մի խանութի մէջ (Ջուրալովի տանը):
Եւ Միքայէլեան կամուրջի վրա (Միրզոյեան տանը):
Զարմանալի է որ հրդէհները այժմ մեծ մասամբ
կիրակի օրերն են յայտնվում մեղանում, երբ խա-
նութները փակված են և ուրեմն ոչ կրակ, ոչ
լոյս կարող է լինել խանութի մէջ: Այդ տխուր
երեւոյթները, որոնք սկսում են աւելի և աւելի
յաճախ կրկնվել Թիֆլիսում, չափից դուրս կաս-
կածաւոր են դառնում: Ցանկալի է որ արդարա-
դատութիւնը խիստ քննութեան տակ գցել այդ
դէպքերը և եթէ մեղաւորներ կան, չը խնայի այդ-
պիսիների վերաբերութեամբ իր ամենաանխնայ
պատիժները: Շատ անմիջեմբ բան է երբ մի հա-
սարակութեան մէջ արմատացած յանցաւոր հա-
կունքները կարելի է զսպել միմիայն ամենախիստ
պատիժներով:

Մարտի 10-ին, գիշերը ժամը 1-ին, կրկին հրդէհ
յայտնվեցաւ Երևանեան հրապարակի վրա, այն
խանութի հարեան խանութում, ուր մարտի 9-ին
կրակ յայտնվեցաւ: Վերջապէս Թիֆլիսում ապ-
րելը անտանելի է դառնում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՏՈՒՆԵԼ, ՍԵՆՏ-ԴՅՈՒՐԿ, ՍԱՐԻ ՄԷՋ

Հռոմում հրատարակվող «Diritto» լրագրում
տպված են գերմանական դեսպանի ձաշի ժա-
մանակ պ. պ. Կեյլիդելի և Կայրօյի ասած
ձաւերի քաղուածքները: Պ. Կեյլիդել Գերմա-
նիայի կողմից շնորհակալութիւն յայտնեց Ի-
տալիային, որ այս վերջինը մի հսկայական
գործի սկզբունք տուցէ: Սենտ-Դյօթարդ
սարի մէջ փորձող տուները հշտացնում
է յարաբերութիւնները և ձանապարհի տա-
րածութիւնը մի քանի ժամով փոքրացնում է:
Չը պէտք է մոռանալ, որ Իտալիան թէ բա-
րոյական և թէ Ֆինանսական կողմից այդ
գործին գլխաւոր մասնակցողն է: Կեյլիդել
շնորհակալութեան զգացմունքից զրգւած ի-
տալական թաղաւորի կենացը առաջարկեց:
Կայրօյի շնորհակալութիւն յայտնեց գերմա-
նական մեծ ազգի ներկայացուցչին, ասելով,
որ այդ ազգը Իտալիայի հետ կապված է բա-
րեկանական անքակտելի կապերով: Նա ասաց
որ այդ օրը ոչ թէ միայն գիտութեան, աշ-
խատանքի, արդիւնաբերութեան և առեւտրի
տօն է, այլ և իտալացիութեան սուրբ գործի
տօն, որին նուիրված են պետական մարքիւ-
րանց աշխատանքները և որը իտալական քա-
ղաքականութեան գլխաւոր նպատակն է: Կայ-
րօյի ասաց, որ նա գերմանական և զուգեւ-
րական դեսպաններին աւելի լաւ ցանկութիւն
չէ կարող յայտնել, քան թէ այն, որ նոր ձա-
նապարհը երեք պետութիւններ մէջ հաս-
տատի բարեկամութիւն և ազատ յարաբերու-
թիւններ, գերմանական կայսրի և Զվիցրիայի
նախագահի կենացները առաջարկելով, Կայր-
օյի մոռնում է փառաւոր Գերմանիայի և աշ-
խատաւոր Զվիցրիայի մասին:

ՄԵՍԿԻՆ ԶԵՆԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

10-նոյն, 9 մարտի: Կարուլից տեղեկաց-
նում են, որ Հերատի հետեւեալ զօրքի տասն
և երկու դունդ և Հեծնազօրքի չորս դունդ
ուղղված են դէպի Գազին:
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԿ, 10 մարտի: «Правит.
Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Թաւաղ
Կայսրը հրամայեց ժանդարմների առանձին
զօրաբաժինը ժամանակաւորապէս ենթարկել
կոմս Լօրիս-Մէլլիքովի անմիջական իշխանու-
թեանը, նոյն իրաւունքներով, որոնք յատկա-
ցրած էին ժամդարմների շէջին:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԿՈՐ ԱՐՄԻՈՒՆԻ

